ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ VIII ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԸ

1970 թ. օգոստոսի 16-ից մինչև 23-ը, Մոսկվայում կայացավ պատմական գիտությունների 13-րդ միջազգային կոնգրեսը։

Կոնգրեսի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ Կրեմլի համագումարների դահլիճում։ Նրա աշխատանքներին մասնակցում էին 60 երկրներից ժամանած մոտ չորս հազար պատմաբաններ, հյուրեր և թղթակիցներ։

Պատմական գիտությունների միջազգային կոմիտեի (ՊԳՄԿ) նախագահ, բելգիացի պատմաբան Պոլ Արսենը, դիմելով կոնգրեսի մասնակիցներին, նրանց հաջողություն ցանկացավ պատմական գիտությունների բարդ խնդիրների լուծման ասպարեզում։

Սովետական կառավարության հանձնարարությամբ ելույթ ունեցավ ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ, ակադեմիկոս Վ. Ա. Կիրիլինը, որը հրապարակեց ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահ Ա. Ն. Կոսիգինի ողջույնը։ Այնուհետև հրապարակվեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Ու-Տանի ուղերձը։

Սովետական գիտնականների անունից կոնգրեսին բեղմնավոր աշխատանք ցանկացավ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, ակադեմիկոս Ա. Մ. Ռումյանցևը։ Ողջույնի խոսք ասաց Մոսկվայի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի նախագահ Վ. Ե. Պրոմիսլովը։

Առաջին պլենար նիստում լսվեց ակադեմիկոս Ե. Մ. Ժուկովի «Լենինը և պատմությունը» զեկուցումը։

ՊԳՄԿ-ում ստեղծվել էին մի շարք հանձնաժողովներ և կոմիտեներ, որոնք միավորում էին պատմության որոշակի ճյուղով հետաքրքրվող գիտնականներին։ Աշխատում էին 9 հանձնաժողովներ՝ բիբլիոգրաֆիկ, ներկայացուցչական հիմնարկների պատմության, եկեղեցական համեմատական պատմության, զինվորական համեմատական պատմության, թերթերի, քաղաքների, համալսարանների, դեմոգրաֆիայի, սրբապատկերների պատմության։

«Մեթոդոլոգիա։ Պատմությունն ու սոցիալական գիտությունները» թեմայի շուրջը ծավալված բանավեճի մասնակիցները պարզաբանեցին առանձին հասարակական գիտությունների միջև եղած կապերը և տնտեսագիտության ու սոցիոլոգիայի կողմից արդեն օգտագործվող մաթեմատիկական մեթոդների հնարավոր իրագործումը պատմական գիտության մեջ, ստրուկտուրային վերլուծության հնարավորություններն ու սահմանները, հասարակության գիտակցության ձևավորման հարցում պատմության նշանակությունը և այլն։ Այս թեմայի կապակցությամբ կարդացվեցին «Պատմական մեթոդի և հասարակական գիտությունների մեթոդի տարբերությունը» (Թ. Շիդեր՝ ԳՖՀ), «Սոցիալական գիտությունների մեթոդը պատմության հետազոտության մեջ» (Տ. Պապադոպուլոս՝ Կիպրոս) և «Պատմությունն ու հասարակական գիտությունները» (Ա. Դյուբյուկ՝ Կանադա) զեկուցումները։ Թեոդոր Շիդերը փորձեց հիմնավորել այն սխալ տեսակետը, թե պատմությունը գործ ունի միայն անցյալի հետ, այնպիսի խնդիրների հետ, որոնք լուծվել են անցյալում, զարգացման ավարտված պրոցեսների, մահացած կառուցվածքային ձևերի և նրանց կրողների, այսինքն՝ մեռած մարդկանց հետ։ Թ. Պապադոպուլոսը ձգտում էր հիմնավորել այն թեզը, թե էկոնոմիկայի, կրոնի, գրականության և այլնի պատմությունները իրենց մեթոդներով պետք է համաձայնեցվեն պատմության ուսումնասիրման ժամանակակից լավ զարգացած և մշակված մեթոդների հետ։ Ա. Դյուբյուկի զեկուցման իմաստն այն էր, թե հասարակական մյուս գիտությունների համեմատությամբ պատմությունը շատ ավելի հարուստ է, որ այն միաժամանակ և՛ իմացություն է, և՛ մշակույթ։

Ի Հակադրություն այս սխալ տեսակետների, ակադ. Ե. Մ. Ժուկովը, պաշտպանելով պատմականության (իստորիզմի) սկզբունքը, համոզիչ կերպով ցույց տվեց պատմությունը հասարակական մյուս գիտություններին հակադրելու փորձերի սնանկությունը։

Կոնգրեսի մասնակիցները լսեցին ֆրանսիացի պրոֆեսոր Ա. Դյուպրոնի «Լեկուն և պատմությունը» հետաքրքիր զեկուցումը, ուր ցույց էր տրվում, թե կուլտուրական ինչպիսի հարստություն են պարունակում պայմանագրերի բառարանը, դիվանագիտական թղթակցությունների բառապաշարն ու շարահյուսությունը։

Մեթոդոլոգիայի սեկցիայում լսվեց նաև երկու զեկուցում՝ «Թվերը որպես պատմաբանի ինֆորմացիայի տարրեր» և «Կենսագրության դերն ու տեղը պատմական գիտության մեջ»։ Պրոֆ. Ի. Դ. Կովալչենկոյի գլխավորած սովետական գիտնականների խումբը ներկայացրեց «Ինֆորմացիայի մեքենայացված մշակման մեթոդները ծառայեցնել պատմագիտությանը» զեկուցումը, ուր ցույց էր տրվում, որ քանակական և մեքենայական մեթոդների հաջող օգտագործումը պատմագիտության մեջ պահանջում է ընդհանուր և մասնագիտական մի շարք հարցերի լուծում և որ հասարակական պրոցեսների ուսումնասիրման գործում այդ մեթոդների օգտագործման բնագավառը ունի խիստ ընդգծված

սահմաններ։ Սովետական գիտնականների դրական եզրահանգումներին միացավ Ժ. Շնեյդերը (Ֆրանսիա)։ «Մեքենան և պատմությունը» իր զեկուցման մեջ նշելով, որ էլեկտրոնային-հաշվիչ մեքենաների օգտագործումը կարող է խիստ օգտակար լինել ժամանակակից պատմաբանի համար, նա միաժամանակ զգուշացրեց, որ պատմական հետազոտությունների բնագավառում մեքենաներին դիմելը առաջադիմական նշանակություն կունենա միայն այն ժամանակ, եթե ուղեկցվի մեթոդոլոգիայի բնագավառի հետազոտություններով, որոնք գերակշռող նշանակություն պետք է ունենան։ Սակայն մտքերի փոխանակության որոշ մասնակիցներ գտնում էին, որ նյութերի աղքատությունն ու մասնատվածությունը երբեմն պատմաբանին հնարավորություն չեն տալիս դիմելու էլեկտրոնային-հաշվիչ մեքենաներին։

Կոնգրեսի աշխատանքների առաջին օրվա երեկոյան նիստում կարդացվեց չորս զեկուցում, որոնք նվիրված էին «Կենսագրությունը և պատմական գիտությունը» թեմային (Խ. Միկոլետցկի, Խ. Լուտց, Ֆ. Էնգել-Յանոշի՝ Ավստրիա, Ա. Վիլսոն՝ Կանադա և Վ. Խուբաչ՝ ԳՖՀ)։

Երկրորդ հիմնական թեման, որը քննարկվեց կոնգրեսի աշխատանքների առաջին օրը, «Մայրցամաքների պատմությունը. նացիոնալիզմը և դասակարգային պայքարը Ասիայի ու Աֆրիկայի մոդեռնիզացիայի պրոցեսում» թեման էր։ Պատմաբանների նախորդ կոնգրեսներում աֆրիկա-ասիական երկրների պատմությունը ներկայացվում էր բավական համեստ ծավալով և վերաբերում էր հեռավոր անցյալին.

Ժողովուրդների ազատագրական պայքարը, գաղութատիրական սիստեմի կործանումը և բազմաթիվ նախկին գաղութների վերածումը սուվերեն պետությունների, բնականաբար, գրավում են ժամանակակից պատմաբանների ուշադրությունը։

Այս թեմայի շուրջը կարդացվեցին հետևյալ զեկուցումները. «Աֆրիկայում և Ասիայում պետությունների առաջացման ուղիներն ու ձևերը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո» (Մարկով՝ ԳԴՀ), «Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ասիական պետություններում տեղի ունեցած որակական փոփոխությունները» (Ա. Պալատ՝ Չեխոսլովակիա), «Նացիոնալիզմը և դասակարգային կոնֆլիկտը Չինաստանում» (Ս. Իմախորի՝ Ճապոնիա), «Աֆրիկյան պետությունների ժառանգորդության պրոբլեմները եվրոպական գաղութատիրության շրջանում և նրանից հետո» (Ֆ. Անչպրենգեր՝ Արևմտյան Բեռլին), «Լատինական Ամերիկան և համաշխարհային պատմական պրոցեսը XIX և XX դարերում» (Ա. Գլինկին՝ ՍՍՀՄ), «Բնավարձակալությունը (Colonato) Լատինական Ամերիկայի Անդյան երկրներում, 1700—1900 թթ. (Մ. Մերներ՝ Շվեդիա), «Սահմանը և մայր երկիրը (մետրոպոլիան)՝ Կանադայի փորձը» (Ռամսեյ Կուկ՝ Կանադա)։ Վերջինս Կանադայի օրինակով խիստ քննադատաբար վերլուծեց ամերիկացի պատմաբան Ֆրեդերիկ Թերների «Սահմանը» ստեղծեց ամերիկացիներին» թեզը Թերների դրույթների քննադատությամբ հանդես եկան նաև սովետական գիտնականներ Ռ. Դախշլեյգերը, Ե. Դրուժինինան, Ա. Պրեոբրաժենսկին, Վ. Տիշկովը և ուրիշներ։

Ոչ միայն պրոբլեմատիկ թեմաները, այլև սեկցիաների աշխատանքների ծրագրում ընդգրկված զեկուցումների մեծ մասը վերաբերում էին պատմության և արդիականության կարևոր խնդիրներին։ Եվ պատահական չէ, որ ժամանակակից պատմության սեկցիայի աշխատանքները ամենաերկարատևն էին կոնգրեսում։ Այդ սեկցիայի նիստերում լսվեց ութ զեկուցում։ Հատկապես սուր և աշխույժ անցավ է. Դիլլայի (ԳԴՀ) «Աշխարհը 1917—1918 թթ.» զեկուցման շուրջ ծավալված մտքերի փոխանակությունը, որի գլխավոր թեման դարձավ այն հարցը, թե որքան խորն ու ծավալուն էր Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությունը ողջ աշխարհի պատմության վրա։ Ելույթ ունեցան երեսուն գիտնականներ։

Մտքերի աշխույժ փոխանակություն ծավալվեց նաև «Գաղափարական հոսանքները Հարավ-արևելյան Եվրոպայում XIX—XX դդ. (մինչև I համաշխարհային պատերազմը)» (Խ. Խրիստով՝ Բուլգարիա) և «Եվրոպական պետություններն ու Բալկանները XX դարի սկզբին, 1900—1914 թթ.» (Դ. Զոգրաֆսկի՝ Հարավսլավիա) թեմաների շուրջը։ Վերջին զեկուցման կապակցությամբ Հայկական ՍՍՀ պատգամավորության անդամ, պրոֆ. Ե. Պ. Աղայանը ցանկություն հայտնեց, որ օսմանյան միապետության ճնշման տակ գտնվող ժողովուրդների, այդ թվում նաև բուլգարների ու հայերի ազգային-ազատագրական պայքարը դիտվի ընդհանուր կապի մեջ։

Ժամանակակից պատմության սեկցիայի նիստերում լսված մյուս զեկուցումներից պետք է հիշատակել հետևյալները. «ՍՍՀՄ-ում կուլտուրական հեղափոխության հիմնական գծերը» (Մ. Կիմ՝ ՍՍՀՄ), «ՍՍՀՄ ազգաբնակչության սոցիալական կազմի փոփոխությունը» (Յու. Պոլյակով՝ ՍՍՀՄ), «Պետության դերը երկրի տնտեսական կյանքում» (Ֆ. Ֆրեյդել՝ ԱՄՆ)։

Հետաքրքիր անցան նաև մյուս մեծ թեմային («Աշխարհը երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակամիջոցում») նվիրված հինգ զեկուցումները, որ կար-

դացին Իտալիայի, Ռումինիայի, Հունգարիայի, ԳԴՀ-ի և Վատիկանի գիտնականները։

Նոր պատմության սեկցիայում լսվեց տասնչորսը զեկույց, որոնցից վեցը մտցվեցին «Եվրոպայի պրոբլեմները XVII դ.» մեծ թեմայի մեջ։ Այս սեկցիայի զեկուցումների թեմաները աչքի էին ընկնում մեծ բազմազանությամբ։ Քննարկվեցին նաև Ռենեսանսի դարաշրջանի Իտալիայում ազնվականության և վարչական օրգանների փոխհարաբերությանը, XVI—XIX դդ. արևմտյան Միջերկրական ծովի երկրների ագրարային կառուցվածքին, ԱՄՆ-ի պատմության ընդհանուր տենդենցին ու մի շարք այլ պրոբլեմների վերաբերող զեկուցումներ։ Սուր բանավեճ առաջ բերեց ամերիկյան պրոֆեսոր Ռ. Պայպսի «Ռուսական պահպանողականությունը XIX դ.» զեկուցումը, որի հեղինակը, կոպիտ կերպով աղավաղելով XIX դարի ռուսական պատմությունը, փորձում էր հիմնավորել այն տեսակետը, թե XIX դ. Ռուսաստանում գոյություն են ունեցել պահպանողական զաղափարախոսության չորս տեսակներ (եկեղեցական, ազնվականական, մտավորական և բյուրոկրատական)։ Սովետական գիտնականները իրենց ելույթներում ապացուցեցին այդ թեզերի հակագիտական ու հակապատմական բնույթը։ Պրոֆ. Ա. Ավրեխը նշեց, որ այդ սխեման հակասում է պատմական փաստերին։ Ա. Ավրեխի դրույթները զարգացվեցին մի խումբ սովետական գիտնականների՝ Ի. Ֆեդոսովի, Վ. Տվարդովսկայայի և այլոց ելույթներում։ Նույնիսկ անգլիական և ամերիկյան մի շարք գիտնականներ ստիպված էին վեճի բռնվելու Պայպսի հետ։ Օրինակ, ամերիկյան գիտնական Ա. Ելյումը նշեց, որ չի կարելի XIX դարի Ռուսաստանի հասարակական միտքը պարբերացման ենթարկել այն լրիվ անշատելով երկրի սոցիալ-քաղաքական իրադրությունից, ինչպես այդ անում է Պայպսը։

Միջնադարի պատմության սեկցիայում առանձնացվեց հետևյալ առանցքային զեկուցումը՝ «Ֆեոդալիզմը որպես պատմական երևույթ, որպես սոցիալական երևույթ և որպես արտադրության միջոց»։ Այս թեմայի կապակցությամբ լսվեց 16 զեկուցում։ Դրանցից ամենից ավելի հետաքրքիրներն էին. «Եվրոպական երկրներում ֆեոդալիզմի գենեզիսի պրոբլեմները» (Զ. Ուգալցովա, Ե. Գուտովա՝ ՍՍՀՄ), «Ֆեոդալիզմը որպես միջնադարյան հասարակության քաղաքական, իրավաբանական ըստրուկտուրա, որպես արտադրության միջոց, որպես սոցիալական երևույթ» (Ժ. Արնոլդի՝ Իտալիա), «Բյուզանդիայի և Ռուսաստանի կապերը» (Դ. Օբոլենսկի՝ Մեծ Բրիտանիա), «Իսլամն ու քրիստոնեությունը Միջերկրականի տնտեսության մեջ վաղ միջնադարի շրջանում» (Պ. Մարտինես, Մոնտավես՝ Իսպանիա)։ Զեկուցումները և դրանց քննարկումները ցույց տվեցին, որ այդ սեկցիայի աշխատանքներում գերիշխողը սոցիալական և տնտեսական հարցերն էին։ Այդ սեկցիայի աշխատանքներին մասնակցող հայ գիտնականներին ամենից ավելի հետաքրքրեց Ֆ. Դվորնիկի (ԱՄՆ) զեկուցումը «Միջին դարերում հունական և արևմտյան եկեղեցիների առաքելությունը Արևելքում»։ Հանդես գալով մտքերի փոխանակության ժամանակ, Բ. Առաքելյանը նշեց, որ զեկուցողը հիմնական ուշադրությունը դարձրել է այս կամ այն երկրում քրիստոնեության հաստատման և Արևելքում քրիստոնեություն սերմանելու համար միսիոներների գործունեության պատմությանը, մինչդեռ քրիստոնեության տարածման սոցիալ-տնտեսական և քաղաքական պատճառները անհրաժեշտ լուսաբանություն չեն ստացել։

Հնագույն պատմության սեկցիայում հիմնական զեկուցումները նվիրված էին «Միջերկրական ծովի երկրներում քաղաքական հավասարակշռության պրոբլեմը» թեմային։ Լսվեց 13 զեկուցում, որոնցից առավել հետաքրքիրներն էին՝ «Քաղաքական հավասարակշռության պրոբլեմը դասական անտիկ շրջանում» (Պ. Բրնվես՝ Իտալիա) և «Կոնֆլիկտը և շարունակականությունը հին Մերձավոր Արևելքում» (Տ. Ռ. Ս. Բրոուգտոն՝ ԱՄՆ) զեկուցումները։ Վերջին զեկուցման հեղինակը ձգտում էր տեսականորեն իմաստավորել մի կողմից պայքարի ու բախման, մյուս կողմից՝ խաղաղ հաջորդակցական զարգացման նշանակությունը մարդկության պատմության մեջ։

Սովետական պատմաբանների ներկայացրած երկու զեկուցումներից ուշադրության արժանացավ Ս. Ուտչենկոյի և Ի. Դյակոնովի համատեղ զեկուցումը «Հին հասարակությունների սոցիալական ստրատիֆիկացիան» վերնագրով։ Զեկուցման հեղինակները գտնում էին, որ հին աշխարհում եղել է ոչ թե երկու, այլ երեք հիմնական դասակարգ. ա) արտադրամիջոցների տեր և չաշխատող (շահագործողներ), բ) արտադրամիջոցների տեր և աշխատող (ազատ գյուղացիություն), գ) արտադրամիջոցներից զուրկ և աշխատող (ստրուկներ և նրանց հարող շերտեր)։ Ելույթ ունեցողները նշեցին զեկուցման թեզերի արկասավորությունը և մի շարք դիտողություններ ու լրացումներ արեցին։

Միջազգային հարակից կազմակերպությունները և ՊԴՄԿ-ի ներքին հանձնաժողովները աշխատում էին զուգահեռ սեկցիաներով։ Այդ կազմակերպությունների շրջանակում առանձնացվեց Վ. Ի. Լենինին նվիրված հատուկ սիմպոզիում՝ «Վ. Ի. Լենինը և պատմական գիտու-

թյուն» թեմայով։ Սիմպոզիումի աշխատանքներին մասնակցող գիտնականները ընդգծեցին, որ լենինիզմն է կողմնորոշում այսօրվա դարաշրջանի զարգացման հիմնական տենդենցները։ «Բոլոր երկրների պատմաբանները պետք է շնորհակալ լինեն սովետական գիտնականներին՝ Լենինի աշխատությունները պատրաստելու և հրատարակելու համար»,— իր ճառում հայտարարեց ավստրիացի պրոֆեսոր Ռ. Շտեյները։

Հաջողությամբ էր ընթանում երկրորդ համաշխարհային պատերազմի պատմության միջազգային կոմիտեի աշխատանքը, որը քննարկեց «Աշխատավորության զանգվածները երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում» թեման։ Հակառակ պատմական փաստերին, ԱՄՆ-ի, Անգլիայի և ԳՖՀ-ի որոշ պատմաբաններ և հրապարակախոսներ ձգտում են նսեմացնել սովետական ժողովրդի վճռակատ դերը, արժեքազրկել նրա հերոսական պայքարը երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ։ Սովետական պրոֆեսոր Պ. Ժիլինի և մյուսների ելույթները ցույց տվեցին, որ ռազմական պատմության սովետական գիտությունը Արևմուտքի պատմաբանների հակագիտական հորինվածքներին հակադրում է պատմական պրոցեսների վերլուծության գիտական ճիշտ տեսակետներ։

Հետաքրքիր բանավեճ ծավալվեց սլավոնական հետազոտությունների միջազգային ասոցիացիայում, որ քննարկվեց «Քաղաքը և նրա դերը ազգային ինքնագիտակցության զարգացման գործում» թեման։ Սովետական գիտնականներ Ե. Դրուժինինան, Յու. Կլակմանը, Պ. Ռինձյունսկին և Ա. Խորոշկևիչը հանդես եկան մի միասնական զեկուցումով («XV—XIX դարերի Ռուսաստանի քաղաքները և նրանց նշանակությունը ազգային ինքնագիտակցության զարգացման մեջ»), որի մեջ բացահայտեցին քաղաքի դերը ռուս ժողովրդի ազգային ինքնագիտակցության ձևավորման գործում։

Կոնգրեսի եզրափակիչ պլենար նիստը ավարտվեց սովետական գիտնական Վ. Լազարևի «Միջնադարյան Ռուսաստանի արվեստը և Արևմուտքը» զեկուցումով։ Այս նիստում նախագահում էր պատմական գիտությունների միջազգային կոմիտեի նոր պրեզիդենտ, սովետական անվանի գիտնական, ակադեմիկոս Ա. Գուրերը։ Նա անփոփ կերպով շարադրեց կոնգրեսի գիտական աշխատանքների արդյունքները, նշելով, որ մոսկովյան կոնգրեսի գլխավոր առանձնահատկություններից մեկն այն էր, որ ավելի ու ավելի մեծ թվով հետազոտողներ տարբեր խնդիրների ուսումնասիրությանը մոտենում են մատերիալիստական դիրքերից և որ կոնգրեսը օգնեց տարբեր երկրների պատմաբանների համագործակցության ընդլայնմանը։

Ժ. ԱՆԱՆՅԱՆ

АРМЯНСКАЯ ГОНЧАРНАЯ МАСТЕРСКАЯ ПРУТО-ДНЕСТРОВЬЯ В XIV в.

В результате археологических раскопок в с. Костешты (Котовский р-н Молдавской ССР) были обнаружены остатки полуземлянки, представляющей собой неправильный в плане прямоугольник (8×7 м), ориентированный длинной осью восток-запад (рис. 1). Глубина полуземлянки колеблется от 1 м до 60—65 см, что обусловливается наклоном местности расположения полуземлянки. В ее средней части находились две пары стоек, образовавшие в плане неправильный прямоугольник. Вдоль стен полуземлянки в толще земли сохранились пазы, в которых устанавливались стойки (расстояние между ними от 1,40 до 2,80 м). Примечательно, что восточная сторона полуземлянки, очевидно входная, имела два свободно стоящих стойки, основанием которых служили сохранившиеся почти плоские известняковые камни неправильной формы и неодинаковых размеров. Камни были врыты в землю таким образом, что их поверхность находилась на уровне с поверхностью пола. На восточной стене полуземлянки можно было видеть остатки деревянной обшивки. На поверхности пола полуземлянки сохранились остатки сгоревшего и рухнувшего на пол деревянного покрытия полуземлянки, а вдоль ее стен в упомянутых пазах—остатки обугливших стоек.



Рис. 1. План полуземлянки.